ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1. **Ընդհանուր տեղեկություններ**

   1.1. Տվյալների գաղտնիության մասին փաստաթուղթում (այսուհետ՝ Փաստաթուղթ) օգտագործվող հասկացությունները ունեն «Իդրամ» ՍՊԸ-ի պաշտոնական կայքում (https://web.idram.am/new/am/page/37) հրապարակված՝ էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրում (այսուհետ՝ Հրապարակային պայմանագիր) սահմանված նույն իմաստները:

   1.2.Համակարգի օպերատորը սույնով պարտավորվում է ապահովել իր Ծառայություն մատուցողների անձնական տվյալների գաղտնիությունը՝ Փաստաթղթում սահմանված պայմաններով:

   1.3. Ընդունելով Փաստաթղթում ներկայացված պահանջներն ու պայմանները՝ Ծառայություն մատուցողը համաձայնում է Համակարգի օպերատորի կողմից իր անձնական տվյալների օգտագործմանն ու բացահայտմանը՝ Փաստաթղթում ներկայացված կարգով:

2. **Անձնական տվյալների հավաքագրում և օգտագործում**

   2.1.Ծառայության մատուցողին Համակարգում գրանցելու եւ «Իդրամ» ունիկալ հաշվառման համար («Իդրամ» ID) տրամադրելու նպատակով Համակարգի օպերատորը ձեռք է բերում Ծառայության մատուցողի մի շարք տվյալներ, որոնք են՝ անուն, ազգանուն, ֆիրմային անուն, ապրանքային նշան, գրանցման և փաստացի գործնեության հասցե, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամար (քաղաքային և բջջային), ինչպես նաև այնպիսի պարտադիր տեղեկություններ, ինչպիսիք են՝ պետական գրանցման ամսաթիվ, պետական գրանցման տվյալներ և այլն: Սույն կետի նպատակներից ելնելով՝ Համակարգի օպերատորն իրավունքի ունի պահանջել և իր մոտ պահել Ծառայություն մատուցողի իրավունակությունը և գործունակությունը հաստատող փաստաթղթի թղթային կամ էլեկտրոնային պատճենը:

   2.2. Պայմանագրի ուժով Համակարգի օպերատորը նաև իրավունք և լիազորություն է ստանում համապատասպան հարցում կատարել և ստանալ Ծառայություն մատուցողի տվյալների վերաբերյալ թարմացված/փոփոխված տեղեկություններ՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական շտեմարանից: Նշված տվյալների ձեռքբերումը նպաստում է Ծառայություն մատուցողների՝ ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Համակարգի օպերատորի կանոնակարգով սահմանված նույնականացմանը եւ անհրաժշտության դեպքում համապատասխան միջոցառումների ձեռնարկմանը:

   2.3. Համակարգի օպերատորը պարտավորվում է չբացահայտել և որևէ կերպ չտարածել իր Ծառայություն մատուցողի կողմից տրամադրված տվյալները, բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ և Հրապարակային պայմանագրով սահմանված դեպքերի:

   2.4. Համակարգի օպերատորը պարտավորվում է պահպանել միայն Իդրամ ԻՎՀ մուտքագրված, Համակարգի օպերատորի մասնաճյուղերում տրամադրված Ծառայություն մատուցողների տվյալների գաղտնիությունը: Համակարգի կողմից Ծառայություն մատուցողի տվյալները կարող են օգտագործվել վերջինիս Գաղտնաբառը վերականգնելու, ֆորս-մաժորային իրավիճակներում Ծառայություն

մատուցողի հետ կապվելու, Ծառայություն մատուցողին Համակարգում փոփոխությունների և ավելացումների մասին տեղեկացնելու և Համակարգի օպերատորի կողմից հաստատված աշխատակարգերով և կանոնակարգով նախատեսված այլ դեպքերում:

2.5. Ծառայություն մատուցողի կողմից Համակարգի օպերատորին տրամադրված տվյալները որևէ այլ դեպքերում չեն տրամադրվում երրորդ անձանց, բացառությամբ Ծառայություն մատուցողի կողմից Համակարգի օպերատորի հետ կնքած Հրապարակային Պայմանագրի խախտման եւ/կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Ծառայություն մատուցողի համաձայնությամբ կամ կարգադրությամբ: Համակարգի օպերատորն իրավունք ունի Համակարգի միջոցով որևէ վճարում ստացող Ծառայություն մատուցողին բացահայտել նրան վճարում կատարած անձի անձնական տվյալները և վճարման գործարքին վերաբերող մանրամասները:

2.6. Ծառայություն մատուցողի և Համակարգի օպերատորի միջև կնքված Հրապարակային Պայմանագրի նպատակներից ելնելով գաղտնի չի համարվում այն տեղեկատվությունը, որը կարող էր ստացվել այլ եղանակով, առանց գաղտնիության պահանջների խախտման:

2.7. «Իդրամ» ID-ով կատարված գործառույթներին վերաբերող տեղեկատվությունը և փաստաթղթերը Համակարգի օպերատորը պահպանում է համապատասխան գործարքի կատարման պահից առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով: Ծառայություն մատուցողը կրում է իր կողմից Համակարգի Օպերատորին տրամադրված տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու բացասական հետևանքների ռիսկերը:

3. Պաշտպանվածություն

3.1. «Իդրամ» ՍՊ Ընկերությունը պաշտպանում է Ծառայություն մատուցողների տվյալները, որոնք գրանցված են Համակարգում, չլիազորված մուտքերից, օգտագործումից և/կամ բացահայտումից: Ծառայություն մատուցողի անձնական տվյալները և բոլոր գումարային գործարքները պաշտպանված են Secure Socket Layer (SSL) տեխնոլոգիայով՝ 128-բիտանոց, բարձր պաշտպանվածություն ունեցող կոդավորմամբ, որը 100%-ով ապահովում է ինֆորմացիայի անվտանգ հոսքը Օգտատիրոջից դեպի սերվեր և հակառակը՝ բացառելով որեւէ երրորդ կողմի միջամտությունը:

4. Փոփոխությունների մասին ծանուցում

4.1.Համակարգի աշխատանքը բարելավելու նպատակով՝ «Իդրամ» ՍՊ Ընկերությունն իրավունք ունի փոփոխություններ կատարել սույն՝ Տվյալների գաղտնիության մասին փաստաթղթում: «Իդրամ» ՍՊ Ընկերությունը պարտավորվում է Ծառայություն մատուցողին տեղյակ պահել Համակարգի կողմից Ծառայություն մատուցողի անձնական տվյալների օգտագործման կանոնների և սահմանափակումների փոփոխությունների մասին այդ փոփոխությունները կատարելուց առնվազն 15 օր առաջ: